

Ք Ս Ա Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Чаша Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են

իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒՆ

Մ Շ Ա Կ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«Մ Շ Ա Կ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղարայան և Բարսիկայան փողոցն. անկիւն):

Ուրիշ բաղադրեցի պէտք է գրեմը այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

Շատ տխուր դատ. Կ. Պօլսի հայոց «ազգային հիւանդանոցի» ներքին անկարգութիւնները. Բիւսմարկ.—ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Երևանից. Նամակ Նոր-Բայազետից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՄԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Լոյս», լոյս. Նամակ Պարսկաստանից. Բարսիկայան լուրեր.—ՀԵՌԱԿԻՆԵՐ. —ՑԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ. Շվեյցարական ազգային տօները:

ՇԱՏ ՏՈՒՌ ԴԱՍ

Բարոյական տեսակետից մի ողբերգական վիճակ է ստեղծվել Սպանիայում: Այն ժամանակ, երբ կառավարութիւնը և պետական անձինք չեն ցանկանում ոչ մի կերպ հաշտվել Կուբա կղզին կորցնելու մտքի հետ և հայրենասիրութեամբ վառված առաջարկում են նոր զոհեր, ժողովուրդը շատ թոյլ արձագանք է տալիս այդ հայրենասիրութեան: Սպանիական նշանաւոր գործող և հայրենասէր Կաստելար հրատարակեց մի յօդուած «Սպանիական կամք» անունով, որի մէջ այն միտքն է յայտնում, թէ սպանիական ժողովուրդն ունի կամք և նա կրիտիկական քաղաքական կարողացել է իր կամքը վերածել գործի՝ հանդէս բերելով անխորտակելի եռանդ և բարոյական ոյժ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՇՎԷՑՑԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԵՐԸ

II

Նիւշատեղ, յուլիսի 13/25-ին

Յիսուս տարի է անցել այն պատմական միջոցառումից, երբ ազգային զորավարը տարաւ յաղթանակը: 1848 թվ. մարտի 2-ին ազատամարտ կուսակցութիւնը՝ բարձրացրեց յեղափոխական դրօշակը, ազատեց Նիւշատեղը պրուսական ծանր լծից, հիմնեց հանրապետութիւն և կապվեց չվեյցարական ազատ կանտօնների հետ: Այժմ Նիւշատեղ կանտօնը տօնում է իր սիրելի հանրապետութեան յիստօրիան: Կանտօնի անհամբեր սպասում էր այս մեծ ազգային տօնին: Այս օրը սիրելի, թանգ է Նիւշատեղի ժողովրդի համար մանաւանդ այն պատճառով, որ դեռ շատ ժամանակ չէ անցել այն միջոցառումից, և այս մեծ պատմական անցքի ակնադրոշմները շատերը դեռ ասպրում են. դեռ շատերի յիշողութեան մէջ թաքնւում են, կենդանի են մարտի 1 և 2-ը: Այն մարտիկ, որոնք այժմ կանչւում են՝ «կեցցէ հանրապետութիւնը, կեցցէ յիստամեակը», այն ժամանակ կանչւում էին՝ «կեցցէ ազատութիւնը, կորիքի միապետութիւնը, կեցցէ յեղափոխութիւնը»: Յիստամեակը պէտք է տօնէին այս տարվայ մարտի 2-ին: Ժողովուրդը յետաձգեց տօնի օրը, նա նշանակվեց աւելի յարմար ժամանակ—ամառը, յուլիս ամիսը: Հանրապետութեան տօնի հետ պէտք է տեղի ունենար և դա չէ աւելացաւ հրացանի և զենքի օրը: Այժմ

երկու հանդէսներն էլ սկսվել են: Սկսեց առաջինից: Տօները վերաբերեալ պատրաստութիւնները հողաւոր համար Նիւշատեղում կազմակերպվեց մի մասնաժողով, որի գլուխն անցաւ, իբրեւ նախագահ, նախկին պատգամաւոր Կօնտէս: Մասնաժողովը բացեց ընդհանուր ազգային նուիրատուութիւն: Եվեյցարիայի ամեն անկիւնից առատ նուէրներ թափվեցին մասնաժողովի կատար: Կարճ միջոցում նուէրների գումարը հարիւր հազար ֆրանկից անցաւ: Այնուհետեւ մասնաժողովն սկսեց իրան յանձնած ազգային պատրաստանաւոր գործը: Նա պատկերեց երկու չվեյցարացի քանդակագործի (Ա. Հէյեր և Ա. Մէյեր) պատրաստելի յիշատակ 1848 թվ. հանրապետութեան արձանը: Արձանն իր ամբողջութեամբ մարմնացնում է ազգային ի ղ է աւել, որի մասին երկար խօսել ենք առաջին յօդուածում: Նա բաղադրեց և երեք հողուց՝ երկու կին և մի տղամարդ: Բարձրահասակ գեղեցիկ կինը, կուրծքը բաց, գլուխը զարդարած մի փոքրիկ պսակով (որտեղ դեռ երեք է մի խաչ), պատկերացնում է Հէյերի վեց լի աւ: Սա կանգնած է՝ մի ձեռքում բարձր բռնած չվեյցարական դաշնակցութեան դրօշակը, իսկ միւս ձեռքը դրել է միւս կնոջ ուսի վրա: Վերջինս մի փոքրահասակ չքանազան կին է՝ սուրբ ձեռքով: Սա ներկայացնում է Նիւշատեղի իր մեծ ջոյը՝ ազգային և ընդունել իրան դաշնակցութեան ծոցը: Հեղեղիան նայում է նրան մի առանձին գգուհով և կարծես մեղմ, քնքոյժ ձայնով ասում է՝ «անբիք գրկեմ, սիրելի ջոյրկիս, վերջապէս ազատվեցար»: Այս երկու կանանց ոտները տակ նստած է մի ա-

նիքը և գերի չէր տանում նրա որդիներին: Կուրծքները պահանջում էին մարդավարի կեանք, ցանկանում էին ունենալ այն, ինչ որ իւրաքանչիւր սպանիացի ցանկանում է իր համար: Սպանիական ժողովուրդն զգում էր կուրծքների պահանջների արդարութիւնը և սպանիական ազգի մէջ շատ մարդիկ կային, որոնք համարում էին կուրծքների պահանջներին և նոյն իսկ պատրաստ էին կուրծքներին համար զոհեր յանձն առնել: Շատերն զգում էին, որ Սպանիան կարող էր տալ կուրծքներին ազատ, ինքնավար կեանք, առանց կորցնելու իր շահերը և նոյն իսկ աւելի ամրացնելով երաժ կապերը: Սակայն այսպէս չը նայեցին գործին սպանիական ժողովրդի ղեկավարող մարմինները, չը կարողացան ըմբռնել իրանց ժողովրդի տրամադրութիւնը, ժամանակի ոգին, և պատերազմ յայտնեցին:

Ի՞նչ պէտք է շահեր Սպանիան, եթէ նա յաղթէր. միթէ Կուրծքի ստրկութիւնը: Իսկ այնպիսի մի հետեւում է, որի համար ժողովուրդն ամենևին չէր կարող ուզեցորդ: Նա այժմ սպանիական ժողովրդի ստանդարտն ու անտարբեր վերաբերմունքը թող մի փառաւոր դաս լինի թէ՛ Սպանիայի և թէ՛ ուրիշ ազգերի համար, որոնք անտես են առնում ժողովրդի իղձերը, ժամանակի ոգին, և ենթարկում են պետութիւնը վտանգի՝ երեւակայական շահեր պաշտպանելու և հիւանդոտ հայրենասիրութեան լիութիւն տալու համար:

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒՆԻՎԱՆՈՑԻ» ՆԵՐԿԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր թղթակիցը Կ. Պօլսից արդէն գրել է ազգային հիւանդանոցում տեղի ունեցած դուռնի դէպքերի մասին: Այս առիթով Կ. Պօլսի լրագրիները հարգում են հետեւեալը. «Պատրիարք Հայրը՝ ընկերակցութեամբ Գնէլ վարդապետի և Թէլեան Բաթրոյ, Խաչատուրեան Կարապետ և Մելքեան Մկրտիչ էֆէնդիներով՝ երէկ Ս. Փրկչի Հիւանդանոցը դնաց և ձեռնարկեց քննութեան. այս միջոցին հասան նաև Տքթ. Օրմանեան և Տիգրան Տէր Ներսէսեան էֆէնդիներ:

Հողմակազմ երկրասարդ տղամարդ: Սա ներկայացնում է Նիւշատեղի ժողովուրդը, ազգային ոյժը—էնդեղիան: Արձանի վրա գրած է՝ «1 Mars 1848»:

Մասնաժողովն առաջարկել էր Նիւշատեղի յայտնի հրապարակախօս-գրող Գոթէին՝ գրել տօնի համար «Նիւշատեղ-Շվեյցարիա» խորագրով մի թատրոնական պիէս, որը պէտք է ներկայացնէ Նիւշատեղի կանտօնի պատմութեան բոլոր գլխաւոր միջոցառումները, ազգային լուսաւորութեան և առաջադիմութեան էվոլյուցիան: Այս պիէսը յատկացրած է ժողովրդական ներկայացուցիչներին տօները ժամանակով Պիէսի երաժշտական մասը և խօրը մեծ տաղանդով և զգացմունքով պատրաստել է Նիւշատեղի երկրասարդ երաժշտագէտ Լօբէր: Մասնաժողովը պիէսը ներկայացնելու համար չինել է տուել քաղաքից դուրս, դեղեցիկ լճի փոխում, մի ահագին ժամանակաւոր շինութիւն, որը հեշտութեամբ տեղադրում է 3000—4000 հոգի: Ի յիշատակ յիստամեակի, մասնաժողովը կարել է տուել մեղաւոր: Մեղաւոր մի երեսը ներկայացնում է հետեւեալը—մէջտեղ կանգնած են երկու հոգի, մի կին և մի տղամարդ: Կինը պատկերացնում է Հէյերին, իսկ տղամարդը Նիւշատեղի կանտօն, որը՝ սուրբ ձեռքով, ներկայացնում է Շվեյցարիային Նիւշատեղի հանրապետութեան եւ ազգային դրօշակը: Երկու հոգի էլ կանգնած են ժողովրդի լեռնային ծաղիկների վրա: Այլ կողմում կանգնած է Նիւշատեղի ժողովուրդը, որտեղ ծածանում է ֆեդերալիզմի դրօշակը: Զախ կողմում նկարված են հին ամրոցը, գեղեցիկ լիւն և հրաշալի Ալպան ձիւնապատ սարերը: Նոյն երեսում արձանագրված է «1 Mars 1848»:

Երբ նախ տնօրէնը հարցման մը պատասխանելով ըստ թէ յուլիս 18-ին օրը մոմագործ Պաղ-տասար յայտնած է իրեն տխուր իրողութիւնը (այսինքն ակտին վարակումը) և անմիջապէս բժշկական քննութիւն կատարել տալով իրողութեան տեղեակ եղած և բժշկներու խորհրդով հարկ եղածը գործարկել փութացած է: Մոմագործ Պաղտասար կանչուելով յայտնեց թէ մեքենավարը օր մը իր քովը ունեցած աշակերտին օր օրի տկարանալը և վերջապէս ակտուար մը ըլլալը յայտնած է, նոյն բանը ինք ալ նշմարելով նաև իր աշակերտին վրա, փութացած է Տնօրէնութեան իմաց տալ: Տքթ. Օրմանեան յայտարարեց թէ ինք մասամբ գոհ կը մնայ այս ակտը հիւանդանոցին մէջ ձարակած ըլլալէն (և անշուշտ, հրապարակուէն), վասն զի, ըստ, ասով կարելի կըլլայ տեղեկանալ դառն իրողութեան և առաջը առնել ամենամեծ անպատեհութեան մը. յարեց թէ ասոնք հսկողութեան թերութեան առաջ եկած են, աշակերտը հսկողութեան կը կարօտի ամբողջ հաստատութիւնը. ժամանակ է որ լուրջ միջոցներ ձեռք առնուին տեղի չտալու համար նմանօրինակ ցաւաւթ դէպքերու: Յետոյ, երկու ներքին բժշկներուն՝ տքթ. Նահապետեանի և Մուխամեդեանի ընկերակցութեամբ ամբողջ հաստատութեան պատրաստութեանը բժշկական քննութեան մը անցունելու ձեռնարկեց: Այս միջոցին Պատրիարք Հայրը հաստատութեան պաշտօնեաները մի առ մի իր քովը կանչելով Հիւանդանոցին ներքին վիճակին վրա տեղեկութիւններ առաւ անոնցմէ. յետոյ իր հետեւորդներով այցելեց կանանց բաժինը և յիմարանոցը: Նոյնպէս այցելելով աղջկանց որբանոցը և կանանց յատուկ բոլոր յարկերը, հրահանգներ տուաւ մայրապետներուն և բոլոր պաշտօնեաներուն:

Այդ առիթով «Մամուլ» ասում է. «Պատրիարքական այցելութիւնը, գէթ որքան որ կ'երևայ վերեւ տրուած տեղեկութիւններէն, աւելի հոգեւոր ու բարոյական կարգուրում մը առաջ բերելու սահմանաւած էր Հիւանդանոցին մէջ՝ բան թէ հիմնական ու կարուկ տնօրինութիւններ, որոնց կը սպասուի անձկութեամբ: Այս այցելութիւն երկու նպատակ ունէր. 1) Ստուգել թէ իրաւ է տղաներուն և քանի մը պաշտօնեաներուն մէջ ձարակած ակտին գոյութիւնը, և թէ ինչո՞ւ անմիջական դարմանը չէ

Մեղալի միւս երեսում գրված է՝ «Նիւշատեղի ժողովուրդը հրճուածքով տօնում է իր ազատութեան յիստամեակ տարեդարձը և ողջունում է հանրապետութեան հիմնադիրներին: Ներքում գրած է դաշնակցութեան դրօշակը, որի երկու կողմին գրած է՝ 1848—1898:

Տօները առիթով հրատարակվում է մի պաշտօնական լրագիր—«Journal officiel du Tir Fé-déral» տեղական մամուլի կոմիտէի խմբագրութեամբ: Լրագիրը գոյութիւն կունենայ միայն տօների ժամանակ և լոյս կը տեսնի միայն 15 համար: Նա պատկերազարդ է և արժէ 3 ֆրանկ: Մասնաժողովը զիտաւոր հոգեւորեց ինչին էր քաղաքը զարդարելը: Նա այնքան միջոց չէր, որ կարողանար իր հաշուով զարդարել ամբողջ քաղաքը: Մասնաժողովը դիմեց ժողովրդի հայրենասիրական զգացմունքներին: Նա ուղղակի առաջարկեց. «Ով սիրում է մեր հայրենիքը և հանրապետութիւնը, թող նա զարգալէ իր տունը կամ իստիութեան: Քաղաքն սկսվեց զարդարվել: Քաղաքացիք մի կողմը թողեցին իրանց առօրեայ հոգսերը, գործերը: Կենդն ուրիշ ընթացք ստացաւ: Ամբողջ ժողովրդի ուղեղը պաշարված էր մի ինչպիսի՜ որքան կարելի է, հանգիստը կերպով տօնել սիրելի հանրապետութեան յիստամեակը: Մի քանի օրվան ընթացքում քաղաքը բոլորովին ուրիշ տեսք ստացաւ: Հարուստ, աղքատ գործուծ էին, իւրաքանչիւր ընտելի ուղեւոր էր աւելի ծով, աւելի ճաշակով զարդարել իր տունը, որով կամենում էր ցոյց տալ ինչպիսի հանրապետութեան ունեցած իր սիրոյ և համակրութեան աստիճանը: Պատշաճութեան վրա ծածանում են չվեյցարական բոլոր կանտօնների զանազան դրոշի ու ձկնի դրօշակները:

խորհուած մինչև որ լրացուցիւն որ այդ տնտես-
կողմից իրենց արձագանք տալու յարկին մէջ
գտնուեցաւ: 2) Այդ գլխիցն յարկին տակ
իրարու յարկողը բարոյական ու ֆիզիքական
գեղձունքներ բաւական և Հիւանդանոցը օրինա-
կելի վիճակի մը մէջ գնելու միջոցները խորհիլ
և գործադրել: Առաջինը, դժբախտաբար,
պէտք եղածէն աւելի հաստատութիւն գտաւ,
նոյն իսկ հրատարակուած հերքմանն համակնե-
րով, այնպէս որ չենք վարձանար եթէ երէկի
պատրիարքական այցելութեան առթիւ՝ անգամ
մը եւ, ու աւելի մերձեցանք օրինա-
կելի չի տեսնուիր: Երկրորդը, որ ամէնէն
էականն է, իրագործուած տեսնելու համար 24
ժամուան միջոցը անբաւական է բնականաբար:
Կը սպասենք և կը պահանջենք ստիպու-
ղաբար որ հարկ եղած դարձանք հետեւեալ
կուր իսկոյն. կիսատ անօրինութիւնները, իրո-
ղութիւնները ծածկելու ջանքեր աւելի վնաս կը
հասցունեն քան օգուտ: Հիւանդանոցը Ազգին
տունը կոչուած է իրաւամբ, և ամեն անհատա-
կան նկատուի, անձնականութիւններ վիրաւո-
րելու փափկանկատութիւններէ վերժ պէտք է
մնայ:

Բ Ի Ս Մ Ա Ր Կ

V

Արիւմի պատերազմի ժամանակ Պրուսիան չէ-
զոքութիւն պահպանել, որովհետեւ Բիւսթարկ շա-
րունակ խորհուրդ էր տալիս կառավարութեան
չը միջամտել այդ պատերազմին, որպէս զի
Աւստրիան չը խրախուսվի և Արեւելքում խոշոր
ազդողութիւն ձեռք չը բերի: Բացի դրանից, Բիւ-
սթարկ զեռ այդ ժամանակ կարծիք յայտնեց, որ
արեւելեան խնդիրը ոչ մի էական նշանակութիւն
չունի Պրուսիայի համար: Դրանով Բիւսթարկ
կարծում էր երկու նպատակի համեմ. գրաւել
Ռուսաստանի համակրութիւնը և տկարացնել
Աւստրիան: Նրա վարմունքը Աւստրիայի վերա-
բերմամբ Թրանսիլվանիայի սէյմում, այնքան ան-
տանելի դարձաւ, անհաւանդ նրա մի նոր ան-
քաղաքավարութիւնը այնքան զգուցեց Աւստ-
րիային և եւրօպական դիպլոմատիային, որ
պրուսական կառավարութիւնը ստիպվեց յետ
կանչել նրան 1859 թիւին: Այդ ժամանակ յա-
րաբերութիւնները Աւստրիայի և Թրանսիլվա-
նիա սաստիկ լարված էին Բուսթարկի միութեան
խնդրի պատճառով և պատերազմը՝ մի կողմից
Թրանսիլվայի և Սարդինիայի, իսկ միւս կողմից
Աւստրիայի մէջ անխուսափելի էր դարձել: Ամ-
բողջ Գերմանիան, նոյն իսկ պրուսական կառա-
վարութիւնը դէմ էին այդ պատերազմին, բայց
Բիւսթարկ ամեն յարմար և անյարմար առիթով
Սարդինիայի կողմն էր բռնում և մի քանի օր,
ցոյց անելու համար, սկսեց Սարդինիայի դե-
պարտի հետ թվանցուկ մանդալ ամբողջ սէյմի
չառով, այդ յանդուրժեց քայլին այնքան զգու-
նէր, որ խոսքիս նա յետ կանչվեց Թրանսիլվանի-
այի: Ուրեմն Բիւսթարկի դիպլոմատական գործու-
նէրութիւնը Թրանսիլվանիայում կատարեալ փիւս-

կօ կրեց: Սակայն որովհետեւ պրուսական կա-
րինետը պէտք ունէր նրան, ուստի նրան դե-
պան նշանակեցին Պետերբուրգ, որպէս զի, ինչ-
պէս ինքն է ասում, «պաղեցնեն իր եռանդը
Նէվայի ցուրտ ջրով»: Պետերբուրգում նա մի
առանձին գործունէութիւն ցոյց չը տուեց. ա-
ռաջին՝ որովհետեւ Ռուսաստանի յարաբերու-
թիւնները Պրուսիայի հետ շատ լաւ էին. երկ-
րորդ՝ նա միայն 2 տարի մնաց այդտեղ: Այդ
պատճառով նա սկսեց պարապել որսորդու-
թեամբ—Բիւսթարկ սաստիկ սիրում էր արջեր
որսը—և բուսեղէնի դասերով: Այդ լեզուն նա
սովորեց բաւական հիմնաւոր կերպով և այնքան
գրավեց, որ մի ժամանակ առաջարկեց իր
կառավարութեան մտցնել գերմանական գիմնա-
զիաների մէջ ռուսաց լեզուն յունարէնի փոխա-
րէն, բայց այդ առաջարկութիւնը մերժվեց:
Մանաւանդ շատ սիրում էր Բիւսթարկ «HARE»
խօսքը, և մի դէպքի առիթով նա քանդակել
տուեց այդ խօսքը իր ծխախոտի արկղիկի վրա,
որովհետեւ ռուսաց այդ առանդական «HARE»
խօսքը, որ որոշ տրամադրութիւն է արտայայ-
տում, շատ սաղ էր գալիս Բիւսթարկի տրա-
մարութեան: Ռուսաց բարձր շրջաններում նը-
բան համակրութեամբ էին վերաբերվում. նախ-
կին դեպքանքի պէս նա իրան չէր պա-
հում պեղանալ պէս և վարմունքը չոր ու ցա-
մաք չէր: Սակայն Ռուսաստանի մասին նա շատ
էլ նպաստաւոր կարծիք չը կազմեց: «Ռուս ժո-
ղովուրդը, ասում էր նա, փայլուն ապագայ կու-
նենայ, եթէ ամբողջովին վարակված չը լինէր
արեւելոյթեան ախտով: Բայց դրանից նա
այն համոզման էր եկել, որ ինչ լաւ բան որ
Ռուսաստանին ունի, գերմանացիներին է պար-
տական:

Այդ միջոցին Պրուսիայում տեղի ունեցաւ
թագաւորութեան փոփոխութիւն և Բիւսթարկ
1862 թիւի սկզբին յետ կանչվեց Պետերբուրգից
աւելի բարձր պաշտօն ստանալու—կառավարու-
թեան ղեկին ստանձնեց, իբրեւ մինիստր-նախա-
գահ: Բայց այդ պաշտօնին ընդունելուց առաջ
նա ինքրեց կարճ ժամանակով նշանակել իրան
դեպան Պարիզում, որպէս զի կարողանայ մո-
տիկից ուսումնասիրել Նապօլէօն III-ին և նրա
քաղաքականութիւնը: Սա այդ կարճ միջոցը
Բիւսթարկի շատ օգտաւէտ գործադրեց. նա կար-
ողացաւ շուրջըրթել Նապօլէօնին, հաճոյանք նը-
բան և քաղցր խօսքերով բացատրել Թրանսիլվ-
իւրիտ վեհապետին իր ապագայ ծրագրերը:
Այդ ժամանակ, ինչպէս յայտնի է, Նապօլէօն
III հրատարակել էր, իբրեւ իր քաղաքականու-
թեան ղեկավար հիմն, ազգայնութեան պրինցի-
պը, պատերազմը Վիեննայի կոնգրէսի պահպան-
դական սկզբունքներին և Բուսթարկի միութեան
ու անկախութիւնը: Բիւսթարկ շուրջըրթել շրթուն-
քով և կեղծ սրտով համոզեց Նապօլէօնին, թէ
չառով մեծ փառքով կը ծածկվի Թրանսիլվան-
իւր կարգաւորել իր սահմանները և կը գտնի
Պրուսիայի մէջ հաստատ նեցուկ իր հրատարա-
կած ազգայնական քաղաքականութեան համար,

դարված է դրօշակներով և եղնիկներով:

Բոլոր այդ վարդաբանքները, բոլոր ղեկօրա-
ցիաները, յաղթական կամարները նսեմանում
են մի գրօտի առաջ: Գրօտ բառը չէ տալիս
այն, ինչ որ ներկայացնում է այս գեղարուես-
տի վառ երևակայութեան գործը: Ուրիշ բառ
չունենալու պատճառով գործ երբ անում այս
խօսքը, որը մտտիկ է այստեղ՝ արտայայտվող
մտքին: Գրօտը գտնվում է քաղաքային այգում:
Ճաղարկաւոր այգեպանը պատրաստել է այս
գրօտը յիսնամեակի տոներին համար: Նա բաղ-
կացած է երեք սիւների: Կողքի սիւները 11/2 սա-
մէն, մէջինը՝ 2 սամէն բարձրութիւն ունեն:
Սիւների մէջ գտնվում է երկու շարքվան, ու-
րոյնից պաղ շուրջ ցայտելով կազմում է երկու
գեղեցիկ լճակ, ուր լողում—խաղում են ոսկե-
գոյն ձկները: Միջին սիւնի տակը գտնվում է
մի բարանձաւ՝ ջրով լի: Այս երեք սիւները շին-
ված են հազար ու մի գոյնի ծաղիկներից: Սը-
րանց դադարներում գտնվում է մի-մի կողով,
չինած բնական ծաղիկներից: Գրօտն իր սիւնե-
րով ներկայացնում է մի արուեստական բլուր:
Բլուրը զարդարված է զանազան նկարներով՝
չինած բնական ծաղիկներից: Կողքի սիւների
վրա ծաղիկներով զրկած է 1848—1898: Ամ-
բողջ բլուրը բաժանվում է երկու մասի: Մի մա-
սի վրա ֆրանսերէն, միւսի՝ գերմաներէն գրված
է բնական ծաղիկներից՝ «Բարի գալուստ թան-
կաղին հիւրերին»: Ի՞նչ մի քանի ամիս առաջ
գեղարուեստ այգեպանն այստեղ ցանել է զա-
նազան ծաղիկների սերմեր, որոնք բունելով
տուել են այս chef-d'oeuvre-ը: Այնքան գեղե-
ցիկ, այնքան բնական է այս գրօտը, որ մօտով
անցնողը յանկարծ ցնցված է տեղի ու տեղը-
նայում է, նայում, դարձեալ նայում, բայց չէ

եթէ չարդեղէ Պրուսիային ջախջախել Աւստրիան:
Նապօլէօն խաղեց Բիւսթարկի շուրջըրթ խօսքե-
րից, ընկաւ նրա լարած թակարդի մէջ և լիա-
կատար հաւատ ընծայեց նրան ու դրանով ար-
դարացրեց այն բնորոշ կարծիքը, որ Բիւսթարկ
կազմել էր նրա մասին. «Նապօլէօն, ասում էր
նա, մի խոշոր, բայց չը ճանաչված անտաղան-
դութիւն է»:

Ապահովացնելով իրան Նապօլէօնի կողմից,
վստահ լինելով, որ Ռուսաստանը, տկարացած
Սեվաստօպոլի պատերազմով և բարկացած Աւստ-
րիայի դէմ, ոչ մի արդեք չի յարուցանի Պրու-
սիայի առաջ, Բիւսթարկ վերադարձաւ Բերլին,
ուր նրան անհամբեր սպասում էր Վիլհելմ I
նոր թագաւորը և ստանձնեց պրուսական քա-
ղաքականութեան ղեկավարի պատասխանատու
դերը: Այդտեղ նրան սպասում էր յամառ կուր-
կուր գերմանական դաշնակցութեան դէմ, կուր-
սահմանադրական սկզբունքներ և պարլամեն-
տական թէժիմի դէմ, կուր ազատամիտ և առա-
ջադիմական գաղափարներ դէմ: Սա նա, ան-
վայն ու յանդուրժ մտաւ այդ կուր մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 10-ին

Երևանը ընդհանրապէս շատ յետ է մնացել և
փոփոխվելու ու բարեկարգվելու այնքան մեծ
կարիք ունի, որ հարկաւոր է քաղաքային ձայ-
նաւորների մի գեղեցիկ կազմ՝ եռանդուն քա-
ղաքագլխով, որպէս զի կարելի լինի ժողո-
վրդի կարիքները հոգալ, կարիքներ—նիւթա-
կան, առողջապահական, մտաւոր և այլն: Բա-
ղաքը պարտքեր ունի, փողոցները սալալա-
տակած չեն, լուսաւորութիւնը թղլ է, կեղտո-
տութիւնները շատ, ջրի մեծ կարիք, տակսայի
մէջ գեղձունքներ, ուսումնարանների և դրաւա-
րան-ընթերցարանների բացակայութիւն, —ասա
այն բաւական հարցեր, որոնք երկար տարի-
ներ զրկում են եղել քաղաքային դուռնայի սեղա-
նի վրա և շուտ շուտ արխիվ գցվել և փռչնների
տակ թաղվել:

Այժմ ամենից շատ զգալի է ուսումնարաննե-
րի և գրադարան-ընթերցարանի բացակայութիւ-
նը: Երևանը ունի միմիայն մի հատ տարրական
դպրոց, որտեղ իւրաքանչիւր տարի ընդունվում
են մի երկու տասնեակ մանուկներ: Բազմաթիւ
մանուկներ, տեղ չը լինելու պատճառով, մնում
են պարապ, փողոցների կեանքի ազդեցութեան
ենթակա: Գլխավորապէս, ուսուցչական սեմինա-
րիան և թեմական դպրոցը իրանց յատուկ դերը
ունեն: Երևանը զուրկ է մանաւանդ հասարակա-
կան գրադարան-ընթերցարանից: Գաղութների
գրադարանները անմատչելի են հասարակութեան
համար. կուրք գրադարանը նոյնպէս սահմա-
նափակ սահմաններ համար է, փոքր քաղաքա-
կեանք նա ծառայում է կանաչ սեղանի երկըր-
դադարների օրպէական հետաքրքրութեան: Իսկ

կշտանում: Նայողը առ ժամանակ մոռանում է
իրան շրջապատող մնացած աշխարհը. նա յուզ-
վում է, նա ուզում է ընկնել այս բլրի վրա,
համբուրել այս անմեղ ծաղիկները, զրկել երե-
ւակայութեամբ անկեղծ գեղեցկութիւնը—հրաշա-
լի հարմօնիս: Սա հասկանալի է: Օրինակ, եթէ
մի հայ ֆրանսերէն չը գիտէ և ուզում է կար-
դալ մի յայտնի հեղինակութիւն—գուարճութիւն,
բաւականութիւն ստանալու համար, նա ստիպ-
ված է ֆրանսերէն հեղինակութիւնը հայերէն
թարգմանել կամ ֆրանսերէն սովորել: Ուրիշ
կերպ դուռն է ըմբռնել հեղինակութեան գե-
ղեցկութիւնը—հարմօնիս և այլն: Իսկ գեղա-
րուեստը Նա ազդում է անմիջապէս: Գեղա-
րուեստը թարգմանի կարիք չունի:

Փոքրիկ, գեղեցիկ քաղաքը զարդարած ազատ
Շվեյցարիայի ժողովուրդը, հրաշալի բնութեան մէջ, հրա-
շալի լիճն իր միջուկայալ, յստակ ջրով իր կա-
նաչաղաքը ափերով, հեռու հորիզոնում Այգեան
տարբեր իրանց ձիւնապատ գագաթներով ներկա-
յացնում են մի քննադ տեսաստրան ու ողբերում
ձկնկեցիլի որդոց, որոնք այսօր միահամուռ կեր-
պով տօնում են իրանց ազատութիւնը:

Վարդը փուշ ունի: Մանեք քաղաքը: Մի
փոքրիկ պողոտ անենք զլիւսաւոր փողոցներում:
Այստեղ—այնտեղ կը տեսնենք տներ, որոնք տօնի
ոչ մի նշան, ոչ մի զարդարանք չեն կրում: Եթէ
զարմանը մտնենք մի այգի (որն այնքան էլ չէ
խնամված), կը տեսնենք, որ ծառերը ծաղկե-
լաղարվել են և տարածում են իրանց շուրջը
նուրը անուշահոտութիւն, իսկ տեղ-տեղ մի քա-
նի ծառեր չեն ծաղկել կամ բլրբլրվի չոր են:
Քաղաքում մի քանի փողոցներում նոյն պատ-
կերը կը տեսնենք: Պատերը մեղր, դռները, պա-
տահանները փակ, ոչ մի մարդկային շուշ, չոր»

ժողովուրդը: 25,000 բնակիչ ունեցող Երևանի
արհեստաւոր, վաճառական դասը ընթերցանու-
թեան միջոցներից զուրկ մնալով, ստիպված
ժամանակը սպանում է դատարկաբանութիւն-
ներով, և չլինալով ինչ կերպ անցկացնել պա-
րապ ժամանակը, իրան տալիս է քէֆերի և
զուարճութիւնների: Գրադարան-ընթերցարան
հիմնելը մասնաւոր մարդկանց ուժերից վեր է:
Այդ բանի ինքնիշխան պէտք է լինի որ և է մի
հաստատութիւն: Այդպիսի հաստատութիւններից
մէկն է Հայոց Բարեգործական ընկերութիւնը,
որի ջանքերը ապարդիւն են անցել: Մնում է
քաղաքային դուռն: Սա էլ չը կարծէք, թէ
այդպիսի խնդիրներով չէ զբաղվում: Այլ, դադա-
վում է, բայց դադարում է արձանագրութիւն-
ների սահմաններում:

Թագաւոր Վայսրի թագաւորութիւնը մի գեղե-
ցիկ ձեռնարկութեամբ յաւերճացնելու նպատա-
կով դուռն ուղղեց Երևանում մի հասարակա-
կան գրադարան-ընթերցարան հիմնել. այդ որո-
շումը այնքան ոգևորութեամբ ընդունվեց հասա-
րակութեան կողմից, որ Բարեգործական ընկե-
րութեան ճիւղը որոշեց իր կողմից էլ նպաստել
այդ գործին: Սակայն որոշումը մնաց որոշում
և մինչև այժմ էլ մենք ոչ գրադարան ունեցանք
և ոչ էլ ընթերցարան: Այս առիթով միշտ խօս-
վել և գրվել է, բայց այդ բոլորը մնացել են լոկ
հնչիւններ: Այժմ, երբ հարցը այսպէս երեսի
վրա մնացել է, իսկ միւս կողմից ընթերցանու-
թեան կարիքը գնալով մեծանում է, ինքն ըստ
ինքեան հարց է ծագում, արդե՞ք քաղաքային
դուռն երբ և իցէ կիրաւորի մի այդ որոշումը,
թէ կարող է և անկատար թողնել: Ա—Իօ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՏԻՑ

Յուլիսի 10-ին

Ընտանեկան կրթութիւնը վերին աստիճանի
անմխիթար դրութեան մէջ է այս քաղաքում:
Ուրիշ աւելի կրթված օտարական այցելուի հա-
մար շատ տարօրինակ է թվում ընտանեկան
այդ կրթութիւնը: Մեծ քաղաքներում ընտանե-
կան կրթութիւնը ուսումնարանական դատարա-
րակութիւնից ոչ պակաս դեր է կատարում,
իսկ մեղանում ընդհանրապէս երեխան ընտա-
նեկան շրջանում բնանում է: Այդ հանգամանքը
մենք վերադրում ենք մտքների անհոգութեանը,
որոնք ոչինչ գաղափար չունեն կրթութեան մա-
սին: Առաջ բերեմք նմաշինք:—Ահա երկուսն
տուն է գալիս երրորդ բաժանմունքի մի աշա-
կերտ, որին դիցուք ուսուցիչը պատուիրում է
վայելչագրութիւնում պարսպիլ տանը: Գալով
տուն՝ նա իր սովորական գոհնիկ լեզուով ասում
է՝ «Բարձրագույն ընծի թամբիս է արել մէ քա-
նի ջերգա դիր գրել: Գրչով թէ մատիտով, դի-
ցուք հարցնում էք:—Ղալամով, համա թղթի
վրա. ես անար երրորդ բաժանմունքում եմ
կարդում. թէ կանա թղթի վրա գրի, —հարա-
տութեամբ պատասխանում է աշակերտը: Մի
ուրիշը, որին ուսումնարանում ուսուցիչը մա-

տները սովորականից աւելի տխուր են:

—Ինչ է պատահել, հարցնում է զարմացած
տեսնողը:

Այս «մաւրը տները պատկանում են յայտնի
կուսակցութեան» հին աշուականութեան ժա-
ռանգներին, սակէ՛ք ողորմելի մնացորդներին:
Սրանք րօյալիս տեսնւր են, պրուսական բռ-
նապետութեան համակրողները: Սրանք 1848 թ.
ազատամիտների թշնամիներն են, որոնք կոչում
էին. «կեցցէ թագաւորը», երբ ազատութեան
դրօշակը ծածանվում էր ամբողջ վրա: Այժմ
սրանք գոչում են՝ «կեցցէ՛ ռուսապետութիւնը»,
երբ ամեն տեղ լուրում է՝ «կեցցէ՛ անդապետու-
նը»: Ազատ Շվեյցարիայում, որը դեռ իդէալ է
եւրօպական պետութիւնների համար, այսպիսի
մի խմբակի դրութիւնը ծիծաղելի և ողորմելի է:
Մարդիկ դէպի լոյսն են գնում, իսկ սրանք դե-
պի խաւերը: Ուրիշները գալիս են պատեղ «ա-
զատութիւն» վայելելու, առաջադիմութեան, ա-
զատ երկրի լուսաւորութեան արդիւնքը տեսնե-
լու, իսկ օրայիստներն իրանց տները փակել են
տօներին ժամանակ, թողել են իրանց գեղեցիկ
ազատ հայրենիքը և գնացել են ժամանակաւո-
րապէս ուրիշ երկրի գնահատութիւն» վայելե-
լու: «Chacun à son goût. Չինացիներից չեն ա-
մաչում: Լոյսն ամեն տեղ հալածում է խաւարը:
Երբ ամեն պատահանից կախած է արձանա-
գրութիւն՝ «Ազատութիւն և Հայրենիք», «Հա-
ւատարմութիւն և Նղբայրասիրութիւն», միապետ-
ների դռներից պէտք է կախել «խաւար» և մի
խումբ մարդակերներ, որոնց դէպիւր են է:
Բայց թղթները այդ խաւարի որդիներն են:

Անցնեմք ընի ափը, ժողովրդական դուարճա-
վայրը: Դրան նուրբված կը լինի մեր հեռուեալ
թղթակցութիւնը:
8. Իւրաքանչեանց

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 24 յուլիսի: Պաշտոնապէս հա-
ղորդած է, որ Սպանիայի պատասխանը, խա-
ղաղութեան պայմաններէ մասին, դեռ չէ
ստացված:

ՄԱԻԻԻԻ, 24 յուլիսի: Սպառազանց, պատաս-
խանելով այն հարցին թէ ինչ իրաւական մէջ
են խաղաղութեան բանակցութիւնները, ասաց,
որ բանակցութիւնները դեռ չեն վերջացել, բայց
թէ Վաշինգտոնի և թէ Սպանիայի կառավարու-
թիւնները պարտաւոր են պահպանել կառարեալ
չափաւորութիւնը:

ԲԵՐԼԻՆ, 24 յուլիսի: Բիւրոսի պատգամայ հո-
գեհանգիստի պատճառով, բոլոր բանկերը և շատ
խանութիւններ փակված են: Երբեք վրա ծածա-
ծանութեամբ են կրօնով չափ ինքնաբերական
ներ: Խանութիւններ պատահաններ վրա դրված
են հանգուցեալի պատկերները և կրօնականնե-
րը, շրջապատած պատկերով և ծաղիկներով:

ԲԵՐԼԻՆ, 24 յուլիսի: Առաւօտեան յանուն
Վիլհելմի կառուցած եկեղեցում, տեղի ունեցաւ
հոգեհանգիստ, ի յիշատակ Բիւրոսի, ներկա-
յութեամբ կայսերական զորքի, պրինցներ, պը-
րինցներ, զինուորական, քաղաքացիական ու քաղա-
քային իշխանութիւններ: Եկեղեցւոյ առաջ կանդ-
նած էր պատուաւոր պահակ. երգում էր օպե-
րային խօրը: Քահանան աղօթքի ժամանակ յի-
շատակեց Բիւրոսի մեծ ծառայութիւնները:

Խմբագիր՝ ԱԼԷԻՍԱՆԴԵՐ ԲԱԼԱՆԹՈՒՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԺՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԻՅԱՆԻ

(Վաղարշ, Վարդգէսի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի
կիրակի օրերէն:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻՅԱՆ—11—12 ժ. վարարու-
թեան, վերնական (սիֆիլիս) և միզաուռ. հ.
Կ. Մ. ԶԻՎՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿԱՆ. Ի. ԲՈՒԻՆԿՈ—10½—11½ ժ.:
կանանց և երեխայի հ., ծաղիկ պատուա-
տուն:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—11½—12 ժ. կա-
նանց հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և
երեխայի հ.

Ա. Գ. ԳՈՐԻՎՈ—12—1 ժ. ներքին, և մի-
ասեական հ. ականջի, կոկորդի և քթի հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՅԷ—6—7 ժ. ներքին և երե-
խայի հ. նեարդային և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻՅԱՆ—6½—7 ժ.
Բ. Ի. ԲՈՒԻՆԿՈ ԶԻՆԱՊԱՆՈՒՄԸ քիմիական
և խորագիտական հետազոտութիւններ է ա-
նում մէջի, խիստ, արեւան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրին: Համախորհրդի
(կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝

150—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԻՅԱՆ

ԳԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային կարիքներ համար)

ՊՈԼԻՏՏՈՐԱ ԳՈՒՏՄԱՆԻ: Մի բանի բոլորում
նորոգում է հին, անշուրհ, խաղաղած կահկարա-
վորը, պիւնիս. բոյալներ, հայելի և ուրիշ
ընթացակարի, արկղիկներ, սիֆիլիս և այլ յղված
փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձա-
գործի կամ ողորդողի օգնութեանը: ԳԻՆԸ՝ 1 ր.:
ՏՕԿԱՅԵԱՆ ԲԱԼԱՍ—միջոց ուղի կոշտերից
(մոգոֆեր), երանգներէ և կաշուէ այլ ուղեւորներ
ից: «Տօկայեան բաղաւոր» առողջացնում է
ուրի կոշտերը, երանգներ և այլն, ամենակարճ
ժամանակում: արմատներով ուղեւորներով նրանց,
հա, սակայն, ցաւ չէ պատճառում: ԳԻՆԸ՝ 60 կ.:

Մախիւմ է դեղաբարական խանութներում:
ԳԼԽԱՆՈՐ ՍԿԱՆԵՍՈՐ Բարձրագոյն հաս-
տատված դեղաբարական ապրանքների Վովկաս
ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:
50—50 (№ 76)

ՀԻՍՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԻՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ՀԵՐԻԿԱ ՍԵՆԿԱՎԵՐԻ

ՅՈՒՐԹԱՍ

(QUO VADIS)

Վէպը, Ներոնի ժամանակից: Լեհերէնից թարգմ.

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆՑ:

(742 մեծագիր էրես)

ԳԻՆԸ 1 ԲՈՒՐԻ 50 ԿՈՊ.

Գրիմը՝ ТИФЛИСЬ, Армянское Издательское
(2.) 15—20



ԳԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՆԻՆ ԶԷԹ, ամբարները պահպանելու-
կարգադրելու և սեպտեմբեր համար: Նա պահպա-
նում է ամբարները ճաքեղութիւն և նպատակ է
նրանց կանոնաւոր ածանա: ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.:

ԿԱՇՈՒԻ ՕՍԱՆԵԼԻԲ, կարգադրում է ամեն
տեսակ կաշի, պահպանում է նրան խոնավութիւ-
նից և բորբոսումից, չինում է նրան անխափան-
ցելի և ձկուն: այս օժանդիքը անփոխարինելի է
որտրդական և ուրիշ կոշիկներ, շաբլոններ,
սանձեր, ձիի սարքի, չեմօղանքների և ուրիշ կա-
շուէ առարկաների համար: ԳԻՆԸ՝ 75 կոպ.:

ԹԱՄԲԱՆԻՆ ՍԱՊՈՆ (շատկապէս սպիտակ կա-
վուց չինում թամբերի համար): Գործ է ածվում
մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և դա-
նազան գոյներ կաշի մաքրելու: ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.:

Մախիւմ է դեղաբարական և կաշիքէն ապ-
րանքների խանութներում:

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝
դեղատան ապրանքների Վովկասեան ընկերու-
թեան մէջ, Թիֆլիս և Բագու:

(№ 76)

50—50

Զգուշացրէք կեղծումները
ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ

ԲՈՐՆՈ-ՏԻՄՈՒԵԱՆ ՍԱՊՈՆ
Գ. Ֆ. ԻՐԻԳԵՆՍ

Ոչնչացնում է պեպկանքը, սեւութիւնը, դե-
ղին բծերը, պոկիկները և պոտկները և
նեղգործում է աւելորդ քրտնելու դէմ: Խոր-
հաղթ է սրվում ձեռք բերել, որպէս տուա-
լէտային ամուշահոտ սապոն, բարձր արժա-
նաւորութեան:

ՈՍԿԷ ՄԷԻՆԱԼ 1893 թվի համար:

Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.:

Մախիւմ է բոլոր ամենալաւ դեղագործա-
կան մաքրակներում և դեղանոցներում:

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի
համար Գ. Ֆ. Իրիգենի մօտ Մօսկվայում:
Դէպօ, Թիֆլիսում, Ալմուրովի մօտ, դեղա-
գործական ապրանքների առարկի կովկասեան
ընկերութեան մէջ, Մուրիմովի և Գրիվնակի,
պ.պ. Պոլովներ և Արիստակովի մօտ:
(10, 25) 13—24

ՀԻՍՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ

Գ. ԷՐԵՐՍԻՍԻ

ՄԱՐԴԻՆԻՆ
(Homo sum)

Վէպը: Գերմաներէն ընդգրկից թարգմանեց
Ստ. Մախիւսեանց

428 էրես: Գինը 1 րուբլի: Գրիմը՝ ТИФЛИСЬ.
Армянское Издательское Общество. 3—20

(2.)

Լոյս տեսաւ

ԼԵՆԻՆ ԽԱՆ-ԱՂԱՆԻ

Գիւղատնտեսական
գործիքներ եւ մեքենաներ

Բացարարական բառարանով և 250 նկարով:
Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց Հրա-
տարակալական ընկերութեան:

ԳԻՆԸ 50 ԿՈՊԵԿ.

Գրիմը՝ ТИФЛИСЬ Общество изданія
армянск. книгъ, Баронская, 12. 29—40

Վարվարա Եփրեմեան Ալիբէկեանց և իր աղջկաներ՝ օր. օր. Սօֆեա,
Օլգա և Մարգարիտ Գալիբեան Ալիբէկեանցներ, Յակոբ Սիմէօնեան
Ալիբէկեանց և իշխանուհի Քալիա Սիմէօնեան Ա. Գրաշվիլի սրտի ցաւով
յայտնում են իրանց ազգականներին ու բարեկամներին—առաջին՝ իր թանկագին ա-
մուսնու, երկրորդը, երրորդն ու չորրորդը իրանց սիրելի հօր, հինգերորդն ու վեցերորդը
իրանց անմոռանալի եղբոր՝ երկրորդ կարգի վաճառական

Գ Ա Ի Ի Թ Ս Ի Մ Ե Օ Ն Ե Ա Ն Ա Լ Ի Բ Է Կ Ե Ա Ն Ց Ի

մահը, որը տեղի ունեցաւ յուլիսի 23-ին, Քուլթայիսում, և խնդրում են շնորհ բերել յու-
ղարկաւորութեան յուլիսի 26-ին, կիրակի օրը:

ՈՒՐԲԷՆ L'URBAIN

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ, ԴՐԱՄԱԳԼԻԻ, ՕԺԻՏԻ, ՀԱՍՈՑԹՆԵՐԻ և այլն ԱՊԱՀՈ-
ՎԱԳՐՈՒԹԵԱՆ, առանձնահոգեւորականութիւն հիւանդութեան և աշխատելու անընդունակու-
թեան դէպքերում, և մասնակցութիւն ունենալով զուտ արդիւնքի մէջ հենց ապահովագ-
րութեան առաջին տարուց սկսած: Գրանցեալը՝ Անդրկովկասի, Անդրկասպեան
երկրի, Թիւրքեստանի և Բուխարայի համար՝ գտնվում է Թիֆլիսում, Միջազգեան փո-
ղոց, № 9, տուն Պոպովայի:

Գլխաւոր լիազօր՝ ԲԱԿԱՍ ԳԵՐԱՍԻՄՈՎԻՉ ՏԷՐ-ՄԱԹԵՆՍԵԱՆ
Տեառն՝ ՆԻԿՈԼԱՅԻ ԳԵՐԱՍԻՄՈՎԻՉ ՏԷՐ-ՄԱԹԵՆՍԵԱՆ

Տեղեկութիւններ և բժշկականներ տալիս են ընկերութեան գործակալները կայսրու թեան բոլոր
քաղաքներում:

(ամս. 10, 25) 4—20

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՆԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից,
եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մանկով Տրապիզոն, Սամսուն և Պոլիս: Մեկնում է Բաթում-
միջ՝ չորեքշաբթի, 5/17 օգոստոսի ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւագնաց ԳԱՐԻԻԿ: Եւ այսպէս շա-
բաթականաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հազարակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
պակաս գինով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱՌՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր Դ'Անտուան, Նաբէլեմայա: ԹիֆլիսՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիօնի փող. Նախկին Արժրուսու ջարդանաւար: ԲԱԿԱՌ—պ. Ս. Դիլլարեանին, Կոլոբեա-
կինայայ հրապարակ: ՆՕՎՈՐՈՍԻԹՅԱ—պ. Միլիտօր Հերշնիօրեանին: (հ. հ. շ.) 15—20

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՄՆԵՐԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնազիտական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով
հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատն էր:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտ-
րական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուաբանութիւն համընդհանուր, 5) Առևտրական թղթակցութիւն, 6)
Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղարդութիւն, վատ
ձեռքի ուղղելը:

Աւսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի
1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև
8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլալում, Ալեքսանդր Փրիզօսովի
տանը, № 9, Սերգիեվկայա և Նազօրնայա փողոցների անկիւնում: Ծրագրերը և
կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Մօլիանօֆների բանկային
գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք դիմում
են՝ ТИФЛИСЬ, С. П. Мануэльянцу. (հ. շ.) 13—25

Ֆիկանսների միևիտրի թոյուտուքեամբ
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова.)

Կուրսերի նպատակն է տալ ունիվերսիտետի մասնադիտական-առևտրական կրթութիւն
և պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատն էր:
Կուրսերում աւանդում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համընդ-
հանուր, 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բան-
կային, 3) Առևտրական թղթակցութիւն, 4) Առևտրական սնտեսագիտութիւն 5) Առև-
տրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղարդութիւն և արագագործութիւն (ուղղումն
ձեռագրի):

ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐԸ ՍԿՎՈՒՄ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ից:

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և եղբ. Մօլիանեան և ընկ.
ԲԱԿԱՌԻ բաժանմունքում: Օտարաբաղադրացի ունիվերսիտետի յարմարութեան համար
կուրսերում ընդունվում են գլխաւորի կինը: Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և
մանրամասն ծրագիրը—տրվում են և ուղարկվում են ձրիաբար: Օտարաբաղա-
դրացիները դիմում են կուրսերի հիմնադրին՝ БАКУ, А. И. Теръ-Васпарову,
(հ. շ.) 7—25